ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ «ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

N ՀՀ ԱԺ - 7

ք.Երևան «15» վեցերորդ 2019թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Նունե Խաչատրյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Օհանյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների եւ դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515 որոշման հավելված 5-ի 8-աղյուսակը (այսուհետ՝ որոշում), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2019 թվականի փետրվարի 13-ի N 43-Ա հրամանը (այսուհետ՝ հրաման)՝ «Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի մաս հանդիսացող «Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի մաս հանդիսացող «Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստում» միջոցառման իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-ն որոշման հավելված 5-ի 8-աղյուսակով նախատեսված՝ 5223.0 հազ. (հինգ միլիոն երկու հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ գումար՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել հրամանով և սույն պայմանագրով սահմանված կարգով և չափով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածներում (1 և 1.1):

2. Կողմերի իրավունքները եւ պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը եւ որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում իր հայեցողությամբ սահմանել թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, եւ կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.2.-ի կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը եւ պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացնելու,

բ. կազմակերպությունը երկու եւ ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. սույն պայմանագրի 5.1. կետով սահմանված կարգով պետական մարմնից ստանալու որոշմամբ սահմանված՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը եւ պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչեւ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի եւ սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը, այլապես այն համարվում է ընդունված:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով եւ (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները եւ ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած՝ ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցների տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Հաշվետվությունների ներկայացման ժամկետները

4.1. Կազմակերպությունը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո պետական մարմին է ներկայացնում ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի մարտի 28-ի N 324-Ն հրամանով, ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն հրամանով եւ ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 176-Ն հրամանով հաստատված ձեւերին համապատասխան կազմված հաշվետվությունները՝ այդ հրամաններով սահմանված ժամկետներում, ինչպես նաեւ կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային եւ տարեկան ամփոփ հաշվետվություններ:

5. Վճարման կարգը եւ ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են որոշմամբ նախատեսված՝ ծրագրով սահմանված վճարումների կատարման եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ ամսական կտրվածքով՝ ոչ ուշ քան հաջորդ ամսվա 10-ը, բացառությամբ դեկտեմբեր ամսվա հասանելիք գումարի, որը կփոխանցվի մինչեւ դեկտեմբերի 20-ը՝ համաձայն ներկայացված ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի (հավելված 2):

5.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով եւ ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով եւ վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու եւ խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում եւ հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա եւ գործում է մինչեւ կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, եւ որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական եւ արտակարգ դրության

հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը եւ այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր եւ ստորագրված են կողմերի կողմից:

9.3. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաեւ սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եւ ստորագրությունները

Պետական մարմին՝
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ
ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194272

Գլխավոր քարտուղար՝

Ն. Խաչատրյան

Կ.Տ.

Կազմակերպություն՝
«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՎՀՀ 02509478
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018004821

Տնօրենի ժ/պ՝

Ա. Օհանյան

Կ.Տ.

Հավելված N 1

2019 թվականի _____ ____-ին

կնքված N_____ պայմանագրի

2019 թվականի հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստման կարգն ու նկարագիրը

Հ/Հ	Անվանում	Համառոտ նկարագիր
1	Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստում	Վերապատրաստման նպատակն է ապահովել հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստումը, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների շարունակական և հետևողական կատարելագործումը: Ծառայությունը պետք է մատուցվի առավելագույնը՝ թվով 50 /հիսուն/ հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների համար՝ երկու խմբով, յուրաքանչյուր խումբ՝ 9-10 աշխատանքային օրվա ընթացքում, յուրաքանչյուր օր՝ 6 կամ 8 ակադեմիական ժամ տևողությամբ՝ համաձայն ՀՀ արդարադատության նախարարի 2019 թվականի փետրվարի 13-ի N 43-Ա հրամանի: Մեկ ակադեմիական ժամի տևողությունը 40 րոպե է: Դասընթացի իրականացման օրերին ունկնդիրների համար կկազմակերպվի մեկ սուրճի և մեկ ճաշի ընդմիջում՝ ֆուրշետի մատուցման տարբերակով, համաձայն սույն պայմանագրի 1.1. հավելվածում նշված մենյուի (ճաշացանկի): Բոլոր ունկնդիրներին պետք է տրամադրվեն անհրաժեշտ գրենական պիտույքներ: Դասընթացները կիրականացվեն Հալաբյան 41ա հասցեում:
		Ծառայության մատուցման ժամկետը
		սկիզբ՝ 30.09.2019թ., ավարտ՝ 25.10.2019 թ.

Պետական մարմին՝
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ
ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194272

Գլխավոր բարտուղար՝

Ն. Խաչատրյան

Կ.Տ.

Կազմակերպություն՝
«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՎՀՀ 02509478
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018004821

Տնօրենի ժ/պ՝

Ա. Օհանյան

Կ.Տ.

Հավելված N 1.1

2019 թվականի _____ -ին

կնքված N_____ պայմանագրի

2019 թվականի ընթացքում հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստման դասընթացների իրականացման օրերի ընթացքում տրամադրվող սնունդի մենյու (ճաշացանկ)	
Հ/Հ	տեխնիկական բնութագիրը
1	• Սուրճի ընդմիջում- 1 անգամ • Ճաշի ընդմիջում- 1 անգամ Յուրաքանչյուր անձի համար սուրճի 1 ընդմիջման կազմակերպումը պետք է ներառի՝ • Ջուր՝ գազավորված 250մլ, աղբյուրի 250մլ, • Սուրճ- լուծվող, սև , կաթով 150 մլ • Թեյ- կանաչ, սև 150 մլ • Թխվածքներ առնվազն 3 տեսակ (յուրաքանչյուր անձի համար 2 կտոր հաշվարկով յուրաքանչյուր կտոր՝ 60գր.), • Գազավորված հյութ 150 մլ • Մրգեր՝ առնվազն 4 տեսակի (յուրաքանչյուր անձի համար 200 գր. հաշվարկով): Յուրաքանչյուր անձի համար ճաշի ընդմիջման կազմակերպումը պետք ներառի՝ • Կանապե՝ 3 տեսակի (ֆիլեով, երշիկով, հոլանդ. պանիրով,վարունգով լոլիկով), յուրաքանչյուր տեսակը առնվազն 60գր., 1 անձի համար յուրաքանչյուր տեսակից առնվազն 1 հատի հաշվարկով • Աղցաններ՝ 2 տեսակի (յուրաքանչյուր աղցանը յուրաքանչյուր անձի համար առնվազն 70 գրամ): Աղցանի տեսակները և բաղադրությունը նախապես համաձայնացնել պատվիրատուի հետ: • Տաք ուտեստներ 2 տեսակի (որից 1-ը մսային ճաշատեսակներ, մսի քաշը՝ առնվազն 150 գրամ, իսկ մյուսը՝ խավարտային, քաշը՝ առնվազն 200 գրամ), 1 անձի համար յուրաքանչյուր տեսակից առնվազն 1 հատի հաշվարկով: Տաք ուտեստի տեսակները և բաղադրությունը նախապես համաձայնացնել պատվիրատուի հետ: • Ըմպելիքներ (1 զովացուցիչ հյութ 250մլ, հանքային ջուր 250մլ, աղբյուրի ջուր 250մլ) • Հացի տեսակների (յուրաքանչյուր անձի համար 150գր. հաշվարկով) Մատուցման ժամերը /սուրճի ընդմիջումների և ճաշկերույթի մատուցման ժամը/ նախապես կհամաձայնեցվի՝ պատվիրատուի հետ:

Պետական մարմին՝
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ
ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194272

Գլխավոր քարտուղար՝

Ն. Խաչատրյան

Կ.Տ.

Կազմակերպություն՝
«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՎՀՀ 02509478
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018004821

Տնօրենի ժ/պ՝

Ա. Օհանյան

Կ.Տ.

Հավելված N 2

2019 թվականի _____ ____-ին

կնքված N_____ պայմանագրի

Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստման ժամանակացույց*

(հազ. դրամ)

Ծրագրի անվանումը	Ընդամենը տարեկան	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2019թ. պետական բյուջեից, ընդ որում (*թվերը ներկայացված են աճողական կարգով)											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ.	սեպտեմ.	հոկտեմ.	նոյեմ.	դեկտեմ.
Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների վերապատրաստում	5223.0	0	0	0	0	0	0	0	0	2611.5	5223.0	5223.0	5223.0

Պետական մարմին՝
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ
ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194272

Գլխավոր քարտուղար՝

Ն. Խաչատրյան

Կ.Տ.

Կազմակերպություն՝
«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՎՀՀ 02509478
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018004821

Տնօրենի ժ/պ՝

Ա. Օհանյան

Կ.Տ.